

ՄՐՑՈՒՅԹ

ԱՐՄԵՆԻԱՆ ՔԱՐԴ ՓԲԸ 2024-2025 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ
ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ԱՈՒԴԻՏԻ ՆՊԱՏԱԿՈՎ ԱՈՒԴԻՏՈՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ
ԸՆՏՐՈՒԹՅԱՆ

Արմենիան Քարդ ՓԲԸ հայտարարում է հրապարակային մրցույթ՝ Արմենիան Քարդ ՓԲԸ 2024-2025 թվականների ֆինանսական հաշվետվության աուդիտ իրականացնելու նպատակով աուդիտորական ընկերություն ընտրելու համար:

Մրցույթին կարող են մասնակցել այն աուդիտորական ընկերությունները, որոնք ունեն ֆինանսական ինստիտուտների աուդիտի անցկացման փորձ և բավարարում են կից ներկայացված մրցույթի հրավերով սահմանված պահանջներին:

Մրցութային առաջարկությունները անհրաժեշտ է ներկայացնել հետևյալ հասցեով՝ ք. Երևան 0010, Խորենացի 15, «Արմենիան Քարդ»:

Մրցութային հայտերի ընդունման վերջին ժամկետն է 2024թ. մայիսի 24 ժամը 17:00:

Լրացուցիչ տեղեկությունների համար կարող եք դիմել

Արմենիան Քարդ ՓԲԸ, 0010, Երևան, Խորենացի 15

Հեռախոս՝ (374 10) 592-211

Էլ-փոստ tender@arca.am

Ինտերնետ կայք www.arca.am

ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ՄՐՅՈՒՅԹԻ

ՀՐԱՎԵՐ

Արմենիան Քարդ ՓԲԸ-ը հայտարարում է հրապարակային մրցույթ՝ Արմենիան Քարդ ՓԲԸ ֆինանսական հաշվետվությունների աուդիտ իրականացնելու նպատակով:

1. Մրցույթի մասնակիցները պետք է ներկայացնեն հետևյալ տեղեկատվությունը

1. աուդիտի աշխատանքներին մասնակցող ընկերության փորձը,
2. առաջարկում ներկայացված աշխատակիցների որակավորման մակարդակը և փորձը
3. աուդիտի ընդգրկման շրջանակները,
4. աուդիտի իրականացման և աուդիտորական եզրակացության ներկայացման ժամկետները , ներառյալ՝ նախնական աուդիտի անցկացման ժամկետները),
5. աուդիտի իրականացման արժեքը,
6. լրացուցիչ տեղեկություններ (այդ թվում տեխնիկական և խորհրդատվական աջակցության հնարավորությունները և շրջանակները)

Մրցութային առաջարկությունը կարող է պարունակել մինչև երկու տարվա համագործակցության ծրագիր: Մեկից ավել տարիների համագործակցության առաջարկի ներկայացման դեպքում ֆինանսական պայմանները պետք է ներկայացվեն տարբերակված՝ մեկ և մեկից ավել տարիների համագործակցության առաջարկների համար:

2. Մրցույթի պայմանները

1. Աուդիտորական եզրակացությունը և «Նամակ ղեկավարությանը» փաստաթղթերը պետք է ընկերությանը ներկայացվեն ոչ ուշ, քան համապատասխանաբար 2023թ. և 2024թ. փետրվար 4-ը:
2. Աուդիտորական եզրակացությունը և «Նամակ ղեկավարությանը» փաստաթղթերը պետք է կազմվեն հայերեն և անգլերեն լեզուներով, ընդ որում երկու լեզուներով կազմված փաստաթղթերն էլ պետք է ունենան միևնույն իրավաբանական ուժը:

Մրցութային առաջարկները բոլոր անհրաժեշտ փաստաթղթերի հետ միասին պետք է Արմենիան Քարդ ՓԲԸ ներկայացվեն մինչև 2024թ. մայիսի 24 ժամը 17:00՝ կնքված ծրարներով: Մրցույթը կկայանա Արմենիան Քարդ ՓԲԸ-ում, Խորենացի 15 հասցեում:

3. Մրցույթի հայտերի պատրաստման կարգը

1. Մրցույթին մասնակցելու համար Մասնակիցը Արմենիան Քարդ ՓԲԸ ներկայացնում է մրցույթի հայտ: Մրցույթի հայտը սույն հրավերի հիման վրա Մասնակցի կողմից ներկայացվող առաջարկն է:
2. Մրցույթի հայտով ներկայացվող տեղեկությունները և փաստաթղթերը պետք է ներկայացվեն երկու փակ և սոսնձված ծրարներում: Ծրարները և հրավերով նախատեսված՝ մասնակցի կողմից կազմված փաստաթղթերը ստորագրում է դրանք ներկայացնող իրավասու անձը:

Մրցույթի հայտի առաջին ծրարի վրա կատարվում են հետևյալ գրառումները.

1. «Արմենիան Քարդ ՓԲԸ, ք. Երևան 0010, Խորենացի 15» բառերը,
2. «Արմենիան Քարդ ՓԲԸ-ի ֆինանսական հաշվետվության աուդիտի նպատակով անկախ աուդիտորական կազմակերպության ընտրության հրապարակային մրցույթ» բառերը,
3. «մրցույթի գնային առաջարկ» բառերը,
4. «չբացել մինչև մրցույթի հայտերի բացման նիստը» բառերը,
5. մասնակցի անվանումը, գտնվելու վայրը, հեռախոսահամարը կամ կապի այլ միջոցները:

Մրցույթի հայտի առաջին ծրարով ներկայացվում են միայն հրապարակային մրցույթի մասնակցի կողմից առաջարկվող աուդիտի ծառայությունների գինը:

Մրցույթի հայտի երկրորդ ծրարի վրա կատարվում են հետևյալ գրառումները.

1. «Արմենիան Քարդ ՓԲԸ, ք. Երևան 0010, Խորենացի 15 » բառերը,
2. «Արմենիան Քարդ ՓԲԸ ֆինանսական հաշվետվության վերստուգման նպատակով անկախ աուդիտորական կազմակերպության ընտրության հրապարակային մրցույթ» բառերը,
3. «մրցույթի տեխնիկական առաջարկ» բառերը,
4. «չբացել մինչև մրցույթի հայտերի բացման նիստը» բառերը,
5. մասնակցի անվանումը, գտնվելու վայրը, հեռախոսահամարը, կապի այլ միջոցները:

Մրցույթի հայտի երկրորդ ծրարով ներկայացվում են բոլոր տեխնիկական առաջարկները, տեղեկությունները և փաստաթղթերը (բացի գնային առաջարկից բոլոր այլ էական պայմանները և տեղեկությունները, այդ թվում՝ աուդիտի ընդգրկման բնագավառները, աուդիտի իրականացման ժամկետները, աուդիտին մասնակցող աշխատանքային խմբի անդամները, աուդիտորական եզրակացության ներկայացման ժամկետները, մատուցման կարգը, ինչպես նաև այլ փաստաթղթերը և տեղեկությունները):

3. Մրցույթի հայտերի ներկայացման պայմանները

1. Մրցույթի հայտն անհրաժեշտ է ներկայացնել առձեռն կամ փոստային ծառայության միջոցով՝ պատվիրված նամակով:
2. Մրցույթի մասնակիցները մինչև մրցույթի հայտերը ներկայացնելու վերջնական ժամկետի ավարտը, կարող են փոփոխել կամ հետ վերցնել հայտերը (հրաժարվել մրցույթին մասնակցելուց): Մրցույթի հայտի փոփոխությունը կատարվում է սույն հրավերով մրցույթի հայտ ներկայացնելու համար նախատեսված կարգով՝ համապատասխան ծրարի վրա ավելացնելով «փոփոխում» բառը: Մրցույթին մասնակցելուց հրաժարվելու դեպքում այդ մասին ծանուցումը կարող է ուղարկվել նամակով կամ ֆաքսով:

4. Հրավերում փոփոխություններ և լրացումներ կատարելը, մրցույթից հրաժարվելը

1. Մրցույթի պայմաններում, ինչպես նաև մրցույթի հայտերը բացելու օրերի և ժամերի վերաբերյալ փոփոխություններ կատարելու անհրաժեշտության դեպքում Արմենիան Քարդ ՓԲԸ-ն կատարում է համապատասխան փոփոխություններ և (կամ) լրացումներ հրավերում (այսուհետ՝ հրավերի փոփոխություն): Սույն կետում նշված հրավերում փոփոխություններ կատարելու դեպքում, այդ մասին ծանուցվում են հրավեր ստացած բոլոր մասնակիցները:
2. Հրավերում փոփոխությունները կարող են կատարվել մինչև մրցույթի հայտերի բացման օրը: Արմենիան Քարդ ՓԲԸ-նը հրավերի պայմանների փոփոխության դեպքում չի կրում մասնակիցների կողմից կրած վնասների ռիսկը:
3. Հրավերում թույլատրվում է կատարել ցանկացած լրացում, եթե դրանով չեն փոփոխվում մրցույթի պայմանների մասին հայտարարության մեջ նշված էական պայմանները:

4. Հրապարակային մրցույթի հանձնաժողովը մինչև մրցույթի հաղթողին որոշելու օրը (հայտերի ամփոփման օրը) իրավունք ունի հրաժարվել մրցույթ անցկացնելուց՝ այդ կապակցությամբ կայացնելով պատճառաբանված որոշում:

Արմենիան Քարդ ՓԲԸ-նը մրցույթ անցկացնելուց հրաժարվելու դեպքում չի կրում մասնակիցների կրած իրական վնասների ռիսկը:

7. Մրցույթի փաստաթղթերի վերաբերյալ պարզաբանումներ ստանալու կարգը

1. Մասնակիցն իրավունք ունի Արմենիան Քարդ ՓԲԸ-ից պահանջել մրցույթի հրավերի պարզաբանում: Այդպիսի պարզաբանումների պահանջները կարող են ներկայացվել ոչ ուշ, քան մրցույթի հայտերի ընդունման վերջնաժամկետը լրանալուց առնվազն հինգ աշխատանքային օր առաջ:

2. Արմենիան Քարդ ՓԲԸ-ն պարզաբանումը տրամադրում է հարցումը ստանալու օրվանից երկու աշխատանքային օրվա ընթացքում: Արմենիան Քարդ ՓԲԸ-ն տրամադրված պարզաբանումների մասին գրավոր ծանուցում է մրցույթի հայտեր ներկայացրած բոլոր Մասնակիցներին:

3. Պարզաբանում չի տրամադրվում, եթե հարցումը կատարվել է սույն գլխի 1 կետով սահմանված ժամկետի խախտմամբ, ինչպես նաև, եթե հարցումը դուրս է մրցույթի հրավերի բովանդակության շրջանակից: